«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեման՝ «Խոսքային հաղորդակցում»

Առարկան՝ Մայրենի

Հետազոտող ուսուցիչ՝ Անահիտ Արեստակեսյան

Ուսումնական հաստատություն՝ Նիզամու միջն.դպրոց

Երևան 2022թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

Գլուխ 1 Խոսքային հաղորդակցում.....5

1.1 Ի՞նչ է հաղորդակցումը.....6

1.2 Հաղորդակցման խոչընդոտները ։ Գործնական հաղորդակցում։.....8

1.3 Հաղորդակցման ժամանակակից միջոցներն եւ պայմանները հանրակրթական ոլորտում.....10

1.4 Արդյունավետ հաղորդակցության սկզբունքները.....11

1.5 Խոսքային և ոչ խոսքային հաղորդակցում.....12

1.6 Ընկալման հոգեբանական մեխանիզմները.....13

Եզրակացություն.....15

Գրականության ցանկ.....17

Ներածություն

Հետազոտական աշխատանքի թեմայի արդիականաությունը:Յուրաքանչյուր հասարակության մեջ խոսքային (վերբալ) հաղորդակցման ձևերը խիստ կարևոր են, քանի որ դրանք ապահովում են տվյալ հասարակության անդամների (սոցիալտարիքային և սեռային տարբեր խմբերի) փոխադարձ շփումները: Դրանք նաև ժամանակի հոլովույթի մեջ փոփոխական են, քանի որ շարունակաբար կորցնում են մեկ ձև և իմաստ, ձեռք բերելով մեկ ուրիշը՝ պայմանավորված մի շարք գործոններով, ինչպես մտածողության որոշակի դրսևորում, միջավայրի (այդ թվում և այլէթնիկ) ազդեցություն և այլն: Այս առումով խոսքային հաղորդակցության համակարգը (մասնավորապես դիմելաձևերը) խիստ դինամիկ է:Խոսքային դիմելաձևեր ասելով նկատի են առնվում բոլոր այն վերբալ ձևերը, որ իմաստավորված են բառի մեջ (անձնանուններ, մականուններ, ազգակցական տերմիններ, զբաղմունքի և տիտղոսանուններ) :

Աշխատանքի նպատակը:Աշխատանքի նպատակը կրթության ոլորտում մանկավարժական հաղորդակցման իրականացման ժամանակակից միջոցների և պայմանների ուսումնասիրումը, խնդիրների բացահայտումը և դրանց լուծման հնարավորությունների նախանշումն է: Թեմայի շրջանակում օգտագործել ենք գրականության մի շարք աղբյուրներ:

Աշխատանքի հետազոտության օբյեկտը: Մանկավարժական գործունեությունը ստորեն կապված է հաղորդակցման հետ , որի ուսումնասիրության հրատապությունը պայմանավորված է մանկավարժական գիտության զարգացման, հաղորդակցաբանության տեսական ու գործնական խնդիրների լուծման հետ, ինչ էլ հնարավորություն է տալիս բացահայտելու հանրային այլ կապերի ու հարաբերությունների նշանակություն, որոնք նպաստում են արդի քաղաքակրթության պահանջներին համապատասխան կրթական համակարգի ձևավորմանը:

Մանկավարժական հաղորդակցաբանության հետազոտության օբյեկտը

մանկավարժական հաղորդակցման նախապատրաստումը, իրականացումն ու արդյունքն է , որտեղ առանցքային նշանակություն ունի և՛ մանկավարժական մասնագիտական , և՛ ոչ մասնագիտական գործունեությունը: Նմանատիպ հետազոտությունները նպաստում են մանկավարժական հաղորդակցաբանության կայացմանը՝ խթանելով աճող սերնդի դաստիարակության (մտավոր, հոգևոր, ֆիզիկական) գործընթացում գիտականորեն հիմնավորված մեթոդների, տեխնոլոգիաների արդյունավետ կիրառմանը:

Աշխատանքի խնդիրները: Աշխատանքի նպատակից բխում են հետևյալ խնդիրները.

1. Սովորողի մտածողության, խոսքի և հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացի առանձնահատկությունների ուսումնասիրություն:
2. Սովորողի մոտ բառապաշարի հարստացում:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը և ծավալը:Հետազոտական աշխատանքը իր մեջ ներառում է բովանդակություն, ներածություն, 1 գլուխ և գրականության ցանկ: Հետազոտական աշխատանքի ընդհանուր ծավալը 16 էջ :

Գլուխ 1 Խոսքային հաղորդակցում

Ով կարողանում է հաղորդակցվել մարդկանց հետ,նա լավ է վարում և՛ մասնավոր և՛ ընդհանուր գործերը, իսկ ով չիկարողանում՝ նա և՛ այնտեղ և՛ այստեղ սխալներ է թույլ տալիս:

Սոկրատես

«Հաղորդակցում» տերմինը ծագել է լատիներեն ,,communico,, բառից, որը նշանակում է դարձնում եմ ընդհանուր, կապում եմ, շփվում եմ: Հաղորդակցման հիմնական նպատակը տեղեկատվության փոխանցումն է, որը կարող է կատարվել զանազան ձևերով:

1.1 Ի՞նչ է հաղորդակցումը

Ի՞նչ է նշանակում կարողանալ հաղորդակցվել. Դա նշանակում է կարողանալ ճանաչել սովորողներին, գնահատել նրանց գործնական հնարավորությունները և, դրա հիման վրա օգտագործելով հաղորդակցման հոգեբանական ունակությունները, նրանց հետ փոխհարաբերություններ կառուցել: Շրջապատի, այդ թվում սովորողների գրագետ և արդյունավետ հաղորդակցվելու հմտությունները մոտակա ժամանակներս դառնալու են աշխատանքի ընդունվելու, աշխատավայրում առաջադրվելու և հաջողության հասնելու թերևս ամենակարևոր գործը: Ցանկացած հաղորդակցություն իրենից ներկայացնում է տեղեկատվության փոխանցման և ընդունման գործընթաց: Տեղեկություն հաղորդողն, այսինքն սովորողը ընտրում է փոխանցվելիք միտքը, գաղափարը, ձևակերպում է այն, ծածկագրում է խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման միջոցների օգնությամբ, հաղորդում է ստացողին: Ստացողը ապածածկագրում է ստացված տեղեկությունը և ճիշտ կամ սխալ հասկանում այն: Իր հերթին նա ընտրում է պատասխան տեղեկությունը, ձևավորում, ծածկագրում

խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման միջոցների օգնությամբ և հաղորդում պատասխանը:



Տեղեկության փոխանցման գործընթացն ունի հետևյալ տեսքը.

Հաղորդող	Ստացող
Ծածկագրում	հաղորդում



հաղորդում ծածկագրում

Հաղորդակցությունը տեղեկությունների փոխանցման գործընթացն է, որը կատարվում է իմաստավոր շարժումներով /ժեստեր/, դեմքի արտահայտություններով, խոսքով, մամուլի կամ էլեկտրոնային փոստի հաղորդագրություններով, հեռախոսով, ռադիոյով, հեռուստատեսությամբ և այլ եղանակներով:

Հաղորդակցումը հասարակական սուբյեկտների /ուսվորող, անձ, սոցիալական խումբ, / փոխներգործության գործընթաց է, որի ժամանակ տեղի է ունենում տեղեկության, փորձի, գիտելիքների, կարողությունների և գործունեության արդյունքների փոխանակում:

1.2 Հաղորդակցման խոչընդոտները: Գործնական հաղորդակցում:

Գործնական հաղորդակցման մեջ հաղորդակցման առարկան գործն է: Դրա նպատակը արդյունավետ հաղորդակցությունն է:

Գործնական հաղորդակցման բարոյականությունը սկզբունքների, նորմերի և պատկերացումների ընդհանրություն է, որը կարգավորում է սովորողի վարքը և հարաբերությունը նրանց սովորելու գործունեության ընթացքում: Հաղորդակցումը միշտ չէ որ հարթ է ընթանում, այն ունի խոչընդոտներ:

Միմյանց հետ շփվելու և հաղորդակցվելու համար սովորողը ձեռք է բերում համապատասխան գիտելիքներ, որպեսզի կարողանան ճիշտ հաղորդակցվել, ինչի կարիքը ունեն բոլորը՝ թե՛ առօրյա կյանքում, թե՛ ուսումնական հաստատությունում: Սակայն միշտ չէ, որ հեշտ է լինում խոսքը շրջապատին հասանելի դարձնելը: Երբեմն հնարավոր է հաղորդակցման ժամանակ խճճվել՝ մտքերը բառերի վերածելու ընթացքում: Հենց այդտեղ էլ օգնության է գալիս գործնական հաղորդակցությունը: Այս դասընթացի ընթացքում մասնակիցները կբացահայտեն տարբեր մակարդակներում առավել արդյունավետ հաղորդակցվելու և հաղորդակցման ընթացքում հաջողության հասնելու իրենց պոտենցիալը, ինչպես նաև՝ ուժեղ կողմերը և բիզնես միջավայրում մրցունակ լինելու հնարավորությունները:

Հիմնական նպատակն է սովորողներին զինել այնպիսի հմտություններով, կարողություններով, մտքերով և գիտելիքներով, որոնք անհրաժեշտ են դպրոցում ու անձնական մակարդակներում հաղորդակցությունը բարելավելու, առավել հեշտացնելու և հաջողության հասնելու համար:

Հիմնական նպատակն է՝ նպաստել սովորողների հաղորդակցման հմտությունների, կարողությունների և աշխատանքային գործունեության ընդհանուր հմտությունների ձևավորմանը, ինչն էլ կիրառելի է յուրաքանչյուր ոլորտում: Գործնական հաղորդակցությունը կնպաստի սովորողների ակտիվ գործունեությանը, գիտելիքների

ինքնուրույն կառուցմանը, ինքնարտահայտմանը, քննադատական մտածողության ձևավորմանը՝ ստեղծելով ինքնուրույն որոշումներ կայացնելու, բազմաթիվ կարծիքների ու տեսակետների նկատմամբ հարգանք ունենալու, արդյունավետ հաղորդակցվելու մթնոլորտի զարգացմանը:



1.3 Հաղորդակցման ժամանակակից միջոցներն եւ պայմանները հանրակրթական ոլորտում

Ներկա ժամանակներում հաղորդակցություն տերմինը մեկնաբանվում է հետևյալ կերպ.

- կապի միջոց,
- շփում, տեղեկատվության փոխանցում մեկ անձից մյուսին (միջանձնային հաղորդակցություն),
- զանգվածային հաղորդակցություն,
- Տեղեկատվության փոխանցում հասարակության մեջ:

Ժամանակի ընթացքում տեխնոլոգիաների զարգացումը ստեղծում է հաղորդակցման նոր ձևեր: Այս տեխնոլոգիական առաջխաղացումները հեղաշրջել են հաղորդակցման ողջ գործընթացը: Տեխնոլոգիաների զարգացումը հնարավորություն է տալիս վերացնել այն խոչընդոտները, որոնց հանդիպում են սովորողներն ու մանկավարժները ամբողջ աշխարհում: Հզոր ծրագրերն ու համացանցը փոխում են գիտելիքներ ձեռք բերելու մեր ուղիներն ու հնարավորությունները: Դասավանդման և ուսուցման նորարարական եղանակները վերափոխում են նաև դասարանում դաս անցկացնելու գործելակերպը: Ավելին, տեխնոլոգիաներն սովորողներին նոր պահանջներ են ներկայացնում. Հիմնական կարողություններից բացի, նրանք պետք է ունենան 21–րդ դարում պահանջվող բոլոր հմտությունները՝ համագործակցության, հաղորդակցման և տեղեկատվական կառավարման կարողություններ, ինչպես նաև նրանց պետք է հասանելի լինեն ուսմանն օժանդակող այն բոլոր միջոցները, որոնք հնարավոր են դարձնում այդ կարողությունների օգտագործումը: Հաղորդակցման

խնդիրներին առնչվում են մարդկային գործունեության տարբեր բնագավառների մասնագետներ: Հաղորդակցման գործունեության հետազոտությունները ներկայումս պատկանում են մարդկային ամենաարդիական ու գլոբալ խնդիրների թվին: Ժամանակակից տեղեկատվական հասարակությունը զարգանում է աննախադեպ արագությամբ: Անհամեմատ ավելի արագ են զարգանում գիտելիքները և կիրառություն գտնում կյանքում: Նման տեմպերով զարգացող հասարակության խնդիրն է համապատասխանեցնել կրթական համակարգը նոր պահանջներին, փոփոխել ուսումնական գործընթացի կազմակերպման կարծրատիպերը, կիրառել մանկավարժական նորագույն տեխնոլոգիաներ և ուսուցման նոր մեթոդներ:

Բարեփոխումների արդի փուլում արագ կողմնորոշվող, տարբեր իրավիճակներում ստեղծագործաբար լուծումներ գտնող, նախաձեռնող ու ինքնակատարելագործման ձգտող անձի ձևավորումը նախ և առաջ կախված է նրա հաղորդակցման կարողությունից: Մեր օրերում գնալով ընդգծվում է հաղորդակցման արդյունավետ իրականացման հիմնախնդիրը, քանզի համացանցի դերի աճի, սոցիալական ցանցերի ընդլայնման, տեղեկատվության, նաև գիտելիքի ստեղծման ու արագ տարածման պայմաններում անհնար է որևէ արդյունքի հասնել առանց հաղորդակցման: Այս հիմնախնդրի լուծման առաջնաքայլը հաղորդակցման իրականացման շուրջ ուսումնասիրությունների կատարումն ու պատկերացումների հստակեցումն է:

1.4 Արդյունավետ հաղորդակցության սկզբունքները

Թվում է շատ պարզ է ասել այն, ինչ մտածում ես: Բայց շատ հաճախ, երբ ցանկանում ենք մեր խոսքը փոխանցել զրուցակցին, ապա այն կարող է կորուստներ կրել վերարտադրելիս, չնայած մեր լավագույն մտադրություններին: Մենք մի բան ենք ասում, զրուցակիցը /սովորողը/ մեկ այլ բան է հասկանում արդյունքում առաջանում է անհամաձայնություն, ինչն էլ իր հերթին ստեղծում է կոնֆլիկտ: Բարեբախտաբար, կան մի շարք մեթոդներ, ուղղություններ, որոնք օգնում են ավելի արդյունավետ հաղորդակցվել: Երբ հաղորդակցվում ենք սովորողի, տնօրենի կամ կոլեգաների հետ,

կարող ենք բարելավվել հաղորդակցային հմտությունները, որոնք հնարավորություն կընձեռեն կառուցել վստահության և հարգանքի մթնոլորտ, թույլ կտան զգալ լսվածն ու հասկացված: Հաղորդակցությունն ավելին է քան միայն տեղեկատվության փոխանակումը: Դա զգացմունքների ու մտադրությունների ընկալումն է, որը ընկած է հաղորդակցությունների հիմքում: Արդյունավետ հաղորդակցումը նաև երկկողմանի ճանապարհ է: Դա միայն այն չէ, թե ինչպես պետք է փոխանցվի հաղորդագրությունը, ինչպես պետք է ստացվի և հասկացվի մեկ ուրիշի կողմից, այնպես ինչպես մենք ենք մտադրված, այլ նաև լսել և հասկանալ խոսքի ամբողջ մտադրությունը, ինչ, որ ասվում է և դիմացինին ևս դարձնել լսված և հասկացված: Հաղորդակցությունը ավելին է, քան պարզապես բառերը, որոնք օգտագործվում են: Արդյունավետ հաղորդակցությունը միավորում է հմտությունների մի շարք՝ ներառյալ ոչ խոսքային *վերբալ* հաղորդակցությունը, լսելու կարողությունը, կառավարել պահի լարվածությունը, ունենալ ունակություն պաշտպանված հաղորդակցման համար և ընդունակություն ճանաչել ու հասկանալ քո սեփական զգացմունքները և այն մարդու, ու հետ շփվում ես: Արդյունավետ հաղորդակցությունը այն սոսինձն է, որ օգնում է խորացնել քո շփումները մյուսների հետ, բարելավվել թիմային աշխատանքը, որոշումների ընդունումը և խնդրի լուծումը: Այն հնարավորություն է տալիս նույնիսկ շփվել բացասական իրավիճակներում՝ պահպանելով հարգանիքի ու վստահության մթնոլորտը: Քանի որ արդյունավետ հաղորդակցությունը հանդիսանում է հմտություն, ավելի արդյունավետ է, երբ այն ինքնաբուխ է, բնական, քան ձևական ու կեղծ: Ելույթը ընթերցելիս ավելի հաճախ չի ունենում այն ազդեցություն մարդկանց վրա, քան այն դեպքում երբ ներկայացվում է բանավոր: Անշուշտ, ժամանակ և ջանքեր են պահանջվում այս հմտությունները զարգացնելու և արդյունավետ հաղորդակցվող դառնալու համար: Ինչքան շատ ջանք ու եռանդ, վարպետություն ներդրվի, այնքան ավելի բնական ու ինքնաբուխ կդառնան հաղորդակցային հմտությունները:

1.5 Խոսքային և ոչ խոսքային հաղորդակցում:

Խոսքային և ոչ խոսքային հաղորդակցում: Ոչ խոսքային գործողությունները շատ կարևոր են մեր հաղորդակցման համար: Ուսումնասիրողները բացահայտել են, որ դեմ-առդեմ հաղորդակցման ժամանակ հասարակական իմաստի 90%-ը կարող է փոխանցվել ոչ խոսքային հաորդակցությամբ:

Խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման հիմական տարբերություններն են՝

- Խոսքային հախորդակցումը զուսպ է՝ բաղկացած հստակ տարբերվող տարրերից: Ոչ խոսքային հաղորդակցումը շարունակական է, այսինքն՝ շարունակվում է այնքան ժամանակ, որքան խոսակիցը ներկա է՝ անկախ նրանից խոսում է, թե՝ ոչ:
- Խոսքային հաղորդակցումը միակողմանի է, ոչ խոսքային հաղորդակցումը՝ բազմա-կողմանի (այն կարելի է տեսնել, լսել, զգալ, համտեսել կամ որոշ զգայարաններ կարող են միաժամանակ գործել):
- Խոսքային հաղորդակցումը գրեթե միշտ կամային վերահսկողության տակ է, բայց երբեմն մարդը տեղյակ չէ իր ոչ խոսքային հաղորդակցումից:

Ոչ խոսքային հաղորդակցումը լրացնում է խոսքային հաղորդակցումը: Սակայն խոս-քային և ոչ խոսքային ուղերձները կարող են հակասող լինել: Նման դեպքերում ոչ խոս-քային հաղորդակցումն է որոշում իմաստը, որովհետև այն ավելի քիչ է ենթակա գիտակից կառավարման: Բայց դա հիմականում տեղի է ունենում այն ժամանակ, երբ իր հաղորդումներում խոսողը կերնտրոնանում է նրա վրա, թե ինչպես է ինքն իրեն վերաբերվում:[3]

1.6 Ընկալման հոգեբանական մեխանիզմները

Ընկալումը՝ սովորողի կերպարի ձևավորումն է, որն առաջանում է նրա արտաքին տեսքի և պահվածքի հիման վրա ստացված գնահատականից: Գործնական հաղորդակցման ժամանակ ստիպված ես փոխհարաբերությունների մեջ մտնել

մարդկանց հետ, որոնց տեսնում ես առաջին անգամ և մարդկանց հետ, որոնց հետ բավականին երկար ժամանակ համագործակցում ես: Հոգեբանական հետազոտությունները ցույց են տվել, որ նախկինում ծանոթ և բոլորովին անծանոթ մարդկանց ընկալման հիմքում ընկած են տարբեր հոգեբանական մեխանիզմեր: Նախկինում ծանոթ մարդկանց ընկալման հիմքում ընկած են միջանձնային հաղորդակցման հոգեբանական մեխանիզմեր, իսկ անծանոթ մարդկանց ընկալման հիմքում ընկած են միջխմբային հաղորդակցման հոգեբանական մեխանիզմները:

Միջխմբային հաղորդակցման հոգեբանական մեխանիզմերից մեկը սոցիալական կարծրատիպերի կիրառումն է, որի հիմքում ընկած է այս կամ այն տիպային սխեմաների վրա մարդու կերպարի կառուցումը: Ընկալման հարցում կարծրատիպերի դերի բացահայտման համար շատ կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ յուրաքանչյուր սոցիալական կարծրատիպ ստեղծված է մարդկանց խմբի կողմից և անհատներն օգտվում են դրանից միայն այն դեպքում, երբ այդ խումբը համարում են իրենցը: Հայտնի են օրինակ, շատ ազգային կարծրատիպեր՝ գերմանացիները ճշտապահ են, անգլիացիները՝ քաղաքավարի, ֆրանսիացիները թեթևամիտ, ռուսներն ունեն խորհրդավոր հոգի, հայերը տաղանդավոր են և աշխատասեր: Անծանոթի կերպարի ձևավորումը տեղի է ունենում նույն կարծրատիպային ընկալման ճանապարհով: Յուրաքանչյուր հասուն մարդ, ով ունի հաղորդակցման փորձ, ընդունակ է մարդուն ընկալել արտաքինով, հագուստով, խոսելաձևով և վարվելակերպով:

Հաղորդակցման մեջ մտնող մարդիկ միանման չեն: Նրանք իրարից տարբերվում են սոցիալական կարգավիճակով, կյանքի փորձով, ինտելեկտուալ ունակություններով, արտաքինով և այլն: Այս տարբերությունների առկայության պայմաններում հաճախ կիրառվում է ընկալման այնպիսի սխեմա, որը բերում է անհավասարության սխալների: Հոգեբանության մեջ այս սխալները ստացել են գերազանցության գործոններ անվանումը:

Ընկալման սխեման այսպիսին է. երբ մենք հանդիպում ենք մի մարդու, որը գերազանցում է մեզ մեր կողմից որպես կարևոր արժեքավորվող որևէ բնութագրով, ապա մենք նրան գնահատում ենք որոշակիորեն ավելի բարձր, քան եթե նա լիներ մեզ

հավասար: Իսկ եթե մենք գործ ունենք սովորողի հետ, որին մեր համար կարևոր որևէ բնութագրով գերազանցում ենք, ապա թերագնահատում ենք նրան:

Եզրակացություն

Այսպիսով, գոյություն ունեն խոսքի զարգացման տարբեր հայեցակարգային մոտեցումներով ստեղծված ծրագրեր և ձեռնարկներ, որոնց հիմքում հիմնականում ընկած են խոսքի բաղադրիչները՝ բառապաշար, քերականություն, խոսք կառուցելու կարողություն:Սակայն գաղտնիք չէ՝ կարելի է ունենալ հարուստ բառապաշար, իմանալ տվյալ լեզվի քերականությունը, հրաշալի տիրապետել խոսք կառուցելու կանոններին, սակայն չունենալ գրագետ, տպավորիչ, համոզիչ, արտահայտիչ խոսք, եթե չունենանք հարուստ, բազմակողմանի զարգացած ներաշխարհով հաղորդակցվելու ցանկություն:



Թվարկված պահանջները սերտորեն փոխշաղկապված են և ուսումնական գործընթացում հանդես են գալիս միասին: Չկա մարդկային գործունեության որևէ ոլորտ, որը հնարավոր չլինի դիտարկել հաղորդակցման տեսանկյունից: Հասարակական գիտություններն ամբողջությամբ կառուցված են խոսքային հաղորդակցման հիման վրա: Ինքնին հաղորդակցում է կրթությունը: Գիտության բոլոր ճյուղերն են զարգանում որպես հաղորդակցում: Իրենց բնույթով հաղորդակցական են գործարար հարաբերությունները և

քաղաքականությունը: Այդ է պատճառը, որ թե՛ բնական, թե՛ հասարակական գիտությունները զարգանում են խոսքային գործունեության անմիջական մասնակցությամբ, իսկ հասարակական մի շարք գիտություններ՝ փիլիսոփայությունը, հոգեբանությունը, սոցիոլոգիան, մշակութաբանությունը, լեզվաբանությունը և այլն, ուղղակիորեն կախում ունեն խոսքի և հաղորդակցման առանձնահատկություններից: Հաղորդակցումը հզոր ազդակ է սովորողի գիտակցության և ճանաչողության զարգացման համար:

Գրականության ցանկ

1. Ա. Ալեքսանյան «Արդյունավետ միջազգային հաղորդակցություն»։
2. Ա. Տեր - Գրիգորյան «Խոսքի զարգացման մեթոդիկա» «Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ» ձեռնարկից։
3. Գ. Ռ. Հովհաննիսյան «Հաղորդակցման Տեսություն»
4. Ն. Հակոբյանի, Ս. Գևորգյանի և ուրիշների հեղինակած «Մանկավարժական հաղորդակցում գրքերի»։
5. Տ. Խաչատրյան «Հաղորդակցման և աշխատանքային գործունեության ընդհանուր հմտություններ»։
6. https://hy.wikipedia.org